

ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅԱՆ (ԱՃԹՆ/EITI) ՆԵՐԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՄԱՆ

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության ներդրման վերաբերյալ հանդիպում-քննարկմանը, որը տեղի կունենա **ս.թ. ապրիլի 21-ին ժամը՝ 11-ին Կապանի քաղաքապետարանի հանդիպման սրահում:**

2017 թվականի մարտի 9-ին Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում կայացած Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության խորհրդի նիստի ժամանակ Հայաստանի Հանրապետությանը շնորհվեց [ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ](#): Հանդիպմանը Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի ՀՀ կառավարությունը, արդյունահանող կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամները մարզի բնակչության, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, հանքարդյունաբերող կազմակերպությունների ներկայացուցիչներին կներկայացնեն ԱՃԹՆ-ի էությունը և Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացը, Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ գործողությունների ծրագիրը, որից հետո կկազմակերպվի ոլորտի վերաբերյալ քննարկում:

Հարգանքով,

**Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ և
ՀՀ Սյունիքի մարզպարան**

Փաստեր ԱՃԹՆ-ի ներդրման վերաբերյալ

✓ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է, որին ներկայումս անդամակցում են 51 երկրներ:

✓ Հայաստանի Հանրապետության վարչապետը արտահայտել է Հայաստանի Հանրապետության պատրաստակամությունը ԱՃԹՆ-ի անդամ երկիր դառնալու կապակցությամբ 2015թ. հուլիսի 28-ին կայացած կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստի ժամանակ և ԱՃԹՆ-ին անդամակցության աշխատանքների համակարգումը պատվիրակվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանին:

✓ ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է բազմաշահառու խումբ (ԲՇԽ), որը կառավարելու և վերահսկելու է Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացը: Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ն կազմված է ՀՀ կառավարության, արդյունահանող կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության 15 ներկայացուցիչներից, որից՝ 6 պետական գերատեսչությունների ներկայացուցիչներ, 4 արդյունահանող կազմակերպությունների ներկայացուցիչներ, 5 քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, որից մեկը՝ գիտության ոլորտի ներկայացուցիչ:

✓ Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածույան հայտը ներկայացվել է 2016 թվականի դեկտեմբերի 28-ին:

✓ 2017 թվականի մարտի 9-ին Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում կայացած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի նիստի ժամանակ Հայաստանի Հանրապետությանը շնորհվեց ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ:

✓ Հայաստանի Հանրապետությունը պետք է հրապարակի երկրի առաջին ԱՃԹՆ-ի զեկույցը 18 ամսվա ընթացքում: ԱՃԹՆ-ի զեկույցը կազմվելու է անկախ կազմակերպության կողմից:

✓ Սկզբնական շրջանում նախաձեռնությունը ընդգրկելու է Հայաստանի մետաղական հանքարդյունաբերությունը: